

քերը նոր ջնջած էին անոր կիսանկախ իշխանութիւնը, եւ ուղղակի թուրք վարչութեան ենթարկած, բայց տակաւին ըմբոստ էր ժողովուրդը: Միւս կողմանէ իւր անցած գծին վրայ դէպ ի Կարմիրք՝ Նաղիոց հովիտը (Քոխ Sagus, Կ. Zagos) նոր մահմետական եղած էր (Քոխ, էջ 55): Հակառակ այս ամէնուն՝ այսօր ալ Սպերի գաւառը հայ նկարագիրը պահած է նաեւ անով որ գիւղերու, լեռանց եւն բոլոր անուանք հայկական մնացած են: Շարք մը նշանակած է Կիպերտ ալ, ուր՝ թէեւ ոմանք ծանօթ թրքական աղաւաղմանց ձեւով են՝ ինքնին կը հասկցուին հայ անունները: Երբ օրինակի համար Պարխարի լեռնաշղթային մէկ մասին՝ Ճէմիլի թիկունքը՝ իբր անուն կը կարգանք Kara Gtur-Dagh, հոս թրքերէն «Գարս», (սեւ) գործ չունի. այլ՝ ինչպէս, «gtur» իսկ կը ցուցնէ, հայ Քարակոտոր անունն է: Նոյնպիսի է՝ ի միջի այլոց Ճորոխի վրայ Արսիս գաւառի Kara Garmütsh գրուածը, որ «Բարակարձան», է նոյն իսկ տեղւոյն այժմ մահմետականացածներուն բերանը: Ասոնց նման շատ են աղաւաղմունք ամէն կողմ, որուն պատճառն ոչ թէ հայ-մահմետականք են, որոնք